

**Նախընտանից գործարանի շահագործման
տեխնիկական իրագործելիության և
ֆինանսական կենսունակության
գնահատում**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄՓՈՓՈՒՄ
2. ՊՔԿ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐ
3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ
4. ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ
5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ
6. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

ԱՄՓՈՓՈՒՄ

- «Նաիրիտում» ՊԲԿ-ի արտադրությունը ֆինանսապես կենսունակ չէ և՛ բութադիենի, և՛ ացետիլենի վրա հիմնված արտադրական պրոցեսների պարագայում:
- Ներդրումներից հատույցը բացասական է բոլոր արտադրական սցենարների և տեխնոլոգիաների դեպքում
- ՊԲԿ արտադրության ծախսերի գնահատականը տարբեր գործընթացների և տեխնոլոգիաների համար (և՛ բութադիենի, և՛ ացետիլենի հիման վրա) ցույց է տալիս, որ նույնիսկ բութադիենի վրա հիմնված ամենացածր ինքնարժեքով գործընթացի պարագայում «Նաիրիտը» կունենա արտադրության ամենաբարձր ինքնարժեքներից մեկը:
- Բութադիենի ինքնարժեքը բարձր է տրանսպորտային մեծ ծախսերի պատճառով, որոնք կազմում են այն գործարան հասցնելու արժեքի 20%-ը: Ացետիլենի վրա հիմնված արտադրությունը թանկ է դրա էներգատարության և Հայաստանում էներգիայի բարձր արժեքի պատճառով:
- «Նաիրիտը» չի կարող մրցունակ լինել եվրոպական, ասիական և այլ շուկաներում արտադրության բարձր ինքնարժեքի և շուկաներից հեռավորության պատճառով: Նաիրիտի արտադրանքի ոչ մրցունակ լինելու պատճառների թվում են հետևյալ գործոնները.
 - Արտադրանքը դեպի գլխավոր շուկաներ հասցնելու հետ կապված տրանսպորտային ծախսը արտադրանքի մեկ տոննայի հաշվով կազմում է մոտ 150 ԱՄՆ դոլար կամ վերջնական արտադրանքի գնի 5%-ը, մինչդեռ մյուս գլխավոր արտահանողների համար արտահանման ծախսերն ավելի ցածր են.
 - Գործարանը վերագործարկելու համար պահանջվող 210-346 մլն ԱՄՆ դոլարի չափով կապիտալ ծախսերը վերականգնելու անհրաժեշտության պատճառով, մինչդեռ խոշոր արտահանողներն արդեն վերականգնել են կապիտալ ծախսերը.
 - Չինաստանը՝ այսօր և ապագայում աշխարհի ամենամեծ շուկաներից մեկը ներքին շուկան պաշտպանելուն նպատակով վարում է հովանավորչական քաղաքականություն:
- Տեխնիկական և ֆինանսական նկատառումներից բխում է, որ կառավարությունը պետք է դիտարկի գործարանի լուծարման ծրագրի մշակման և իրականացման խնդիրը:

2. ՊՈԼԻՔԼՈՐՈՊԻԵՆԱՅԻՆ ԿԱՌԻՉՈՒԿԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՊՔԿ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՀԱՆՁԱՐԿ

- ՊՔԿ համաշխարհային շուկան աճել է 4 անգամ ավելի դանդաղ, քան համաշխարհային ՀՆԱ-ն:
- Դանդաղել է ՊՔԿ օգտագործող որոշ խոշոր ճյուղերի աճը, իսկ այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են ավտոմոբիլաշինությունն ու վերամշակող արդյունաբերությունը, առկա է պոլիքրոնոպրենային կաուչուկի փոխարինում այլ տեսակի կաուչուկով (էթիլեն-պրոպիլեն-դիեն-մոնոմեր, EPDM):
- Կանխատեսելի ապագայում տվյալ ՊՔԿ նկատմամբ հիմնական պահանջարկը հավանաբար կլինի Ասիայից:
- Հյուսիսային Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում շուկաներն արդեն հագեցած են և ավելի քիչ կնպաստեն համաշխարհային պահանջարկի աճին:

Աղյուսակ 2. Համաշխարհային պահանջարկը՝ ըստ տարածաշրջանի և սպասվող աճի տեմպի

Տարածաշրջան	2000	2005	2010	2014	2020 կանխ.	2025 կանխ.	2030 կանխ.	2040 կանխ.	Միջին տարեկան աճ
Ասիա	122	146	167	163	178	197	215	245	1.6%
Հյուսիսային Ամերիկա	63	59	64	66	68	69	70	72	0.3%
Արևմտյան Եվրոպա	63	74	80	80	83	86	87	90	0.5%
Արևելյան Եվրոպա	9	13	11	10	12	14	17	21	2.9%
Հարավային Ամերիկա	16	14	16	18	20	22	24	27	1.7%
Մերձավոր Արևելք/Աֆրիկա	7	10	11	7	8	9	10	11	1.7%
Ընդամենը	280	317	350	344	370	397	423	466	1.2%

ՊՔԿ ՀԱՄԱՇԽԱՐԿԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

- ՊՔԿ-ի արտադրության համաշխարհային հզորությունը գնահատվել է 400,000 տոննա:
- Ասիային բաժին է ընկնում ընդհանուր տեղադրված հզորությունների մոտ 60%-ը, Արևմտյան Եվրոպային՝ 21%-ը, իսկ Հյուսիսային Ամերիկային՝ մոտ 19%-ը:

Աղյուսակ 3. Քլորոպրենային կաուչուկի արտադրության համաշխարհային հզորություններն՝ ըստ երկրների

Ընկերություն	Երկիր	Ընդհանուր հզորություն 2014 (ԿՏՏ)	Շուկայի մասնաբաժնի %
Denki Kagaku Kogyo K.K.(Denka) / Mitsui USA JV	Ճապոնիա	175	38%
Lanxess	Գերմանիա	83	21%
Shanxi Synthetic Rubber Group Co Ltd/Nairit JV	Չինաստան/ Հայաստան	40	10%
Tosoh Corporation	Ճապոնիա	34	9%
Chongqing Changshou Chemical Co., Ltd.	Չինաստան	30	8%
Showa Denko	Ճապոնիա	23	6%
China Others	Չինաստան	5	1%
Ընդամենը		400	100%

- Կանխատեսվում է, որ համաշխարհային հզորությունները կմնան անփոփոխ, սակայն բավական կլինեն համաշխարհային պահանջարկն առնվազն մինչև 2025 թվականը բավարարելու համար:

Աղյուսակ 4. Հզորության ընդհանուր ավելացումները և հեռանկարային պահանջարկը, 2014-2021 թթ.

Պոլիքլորոպրենային կաուչուկ		2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Ընդհանուր համաշխարհային հզորություն	կիլոտոննա	402	400	405	405	405	405	405	405	405
Ընդհանուր համաշխարհային պահանջարկ	կիլոտոննա	344	344	348	352	35	361	365	370	375
Հզորությունների օգտագործման համաշխարհային մակարդակ	%	83%	82%	86%	87%	88%	88%	88%	87%	87%

3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Նաիրիտում» քլորոպրենային կաուչուկի արտադրության հնարավոր վերագործարկման տեխնիկական իրագործելիությունը դիտարկվել է արտադրության երեք տարբերակների տեսանկյունից.

- տարեկան 12 հազ. տ ՊՔԿ արտադրություն՝ ացետիլենային եղանակով
- տարեկան 24 հազ. տ ՊՔԿ արտադրություն՝ ացետիլենային եղանակով
- տարեկան 25 հազ. տ ՊՔԿ արտադրություն՝ բութադիենային եղանակով

Արտադրության կազմակերպման խոչընդոտները և պահանջվող կապիտալ ներդրումներն են՝

Ա. Տարեկան 12 հազ. տ ՊՔԿ արտադրություն՝ ացետիլենային եղանակով

Հիմնական տեխնիկական խոչընդոտները հետևյալն են.

- Անվտանգ և արդյունավետ շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ է մոնոմերի թողարկման գրեթե ամբողջապես նոր արտադրամաս:
- Մեթանի մասնակի օքսիդացման կայանքի արտադրողականությունը նախկինում զգալիորեն զիջել է իր սկզբնական նախագծային ցուցանիշին, ինչպես նաև ժամանակակից կայանքների արտադրողականությանը: Սակայն BASF-ի տեխնոլոգիայից և մասնագետների ծառայությունից օգտվելը ներկայիս դրությամբ բաց հարց է մնում:
- Ացետիլենային եղանակով նկատի է առնվել սինթեզ-գազի օգտագործման լրացուցիչ նոր արտադրամասի ստեղծման հնարավորությունը, որպեսզի քլորոպրենի արտադրությունը ստացվի ացետիլենից ավելի քիչ ծախսատար: Սակայն, եթե այդ դեպքում կապիտալ ծախսերը նշանակալիորեն ավելանան, ապա հաշվի առնելով սինթեզ-գազի համեմատաբար փոքր քանակությունները, նման տարբերակը դժվար թե տնտեսապես արդարացվի:
- Կա նաև ացետիլենի արտադրությունն ընդլայնելու և քիմիական արդյունաբերությունում կիրառվող այլ նյութերի, օրինակ՝ 1,4-բութանդիոլի արտադրությամբ այն դիվերսիֆիկացնելու հնարավորություն: Սակայն սա պահանջում է լրացուցիչ գնահատում, հաշվի առնելով հետևյալ հիմնական ռիսկերը.
 - բնական գազի ավելի բարձր գինը դրա պատմական մակարդակների համեմատությամբ
 - տեխնոլոգիայի հասանելիության խնդիրը
 - լոգիստիկ ծախսերը

Բ. տարեկան 24 հազ. տ ՊՔԿ արտադրություն՝ ացետիլենային եղանակով

Հիմնական տեխնիկական խոչընդոտները գերազանցապես նույնն են, ինչ որ տարեկան 12 հազ. տոննայի տարբերակում, հետևյալ բացառություններով.

- Անվտանգ և արդյունավետ շահագործում ապահովելու համար հարկ կլինի ստեղծել մոնումերի լրիվ նոր և ավելի մեծ արտադրական հզորությամբ արտադրամաս, որը կպահանջի հավելյալ ներդրումներ:
- Բոլոր դեպքերում, քլորոպրենի ստացումն ացետիլենից ծախսարդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է սինթեզ-գազի օգտագործման նոր լրացուցիչ արտադրամաս: Այնուամենայնիվ, դա զգալիորեն կմեծացնի կապիտալ ծախսերը, ինչը հազիվ թե արդարացվի հաշվի առնելով սինթեզ-գազի համեմատաբար փոքր քանակությունները:

Գ. տարեկան 25 հազ. տ ՊՔԿ արտադրություն՝ բութադիենային եղանակով

Բութադիենային եղանակով արտադրությունը և՛ շատ ավելի անվտանգ է, և՛ ավելի փոքր ծավալի ներդրումներ է պահանջում: Հիմնական մարտահրավերներն այստեղ հետևյալն են.

- Բութադիենից մոնոմերի ստացման գոյություն ունեցող արտադրամասի վերակառուցում: Արտադրամասի սարքավորումները հիմնականում արդեն առկա են և անսովոր նյութերից պատրաստված լինելու շնորհիվ արտադրական նպատակների համար բավարար են համարվում:
- Բութադիենի ներկրման համար հարկ կլինի վերանորոգել գործարանի երկաթուղային հանգույցը:
- Ինժեներական կոմունիկացիաների ցանցի վերստուգում և անհրաժեշտության դեպքում հատվածների վերանորոգում:
- Նոր վերահսկման համակարգ, վերահսկիչ-չափիչ սարքեր, մալուխներ և օպերատորական ղեկավարման վահանակներ, ինչպես նաև մեխանիկական պահեստամասերի նոր պահեստի ստեղծում, որը հարկ կլինի տեղափոխել մոնոմերի արտադրամասից ապահով հեռավորության վրա:
- Վերակառուցման աշխատանքները պետք է հիմնվեն արտադրական գործընթացի վերաբերյալ «Նաիրիտի» սեփական գիտելիքների վրա, քանի որ տեխնոլոգիական պրոցեսի նախորդ արտոնագրողը (BP Chem / Distillers) 1970-ական թվականներից ի վեր այս տեխնոլոգիայով գործարան չի արտոնագրել: Այդպիսով, «Նաիրիտից» դուրս տեխնիկական գիտելիքներ առկա են միմիայն նման գործարաններ ներկայումս շահագործող կազմակերպություններում (Lanxess, DENKA, SDK և Tosoh):

4. ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Ա. Տարեկան 12 հազ. տ ՊՔԿ արտադրությունն ացետիլենային եղանակով

	մլն. ԱՄՆ դոլար
Ներգործարանային տնտեսության ծախսեր.	159,8
- Քլորալկալիական առկա տեղամասի վերակառուցում	10,1
- Տարեկան 10.4 հազ. տ ացետիլենի ստացման նոր արտադրական տեղամասի ստեղծում	40,5
- Տարեկան 12 հազ. տ ՔՊ մոնոմերի ստացման նոր արտադրական տեղամասի ստեղծում	84,4
- ՊՔԿ կաուչուկի արտադրության առկա տեղամասի վերակառուցում	14,8
- ՆԳՏ ընդհանուր կոմունիկացիաներ	10,0
Արտագործարանային տնտեսության ծախսեր.	31,9
ԸՆԴԱՄԵՆԸ ծախսեր.	191,6

Բ. Տարեկան 24 հազ. տ ՊՔԿ արտադրությունն ացետիլենային եղանակով

	մլն. ԱՄՆ դոլար
Ներգործարանային տնտեսության ծախսեր	264,7
- Քլորալկալիական առկա տեղամասի վերակառուցում	18,1
- Տարեկան 20,8 հազ. տ ացետիլենի ստացման նոր արտադրական տեղամասի ստեղծում	65,8
- Տարեկան 24 հազ. տ ՔՊ մոնոմերի ստացման նոր արտադրական տեղամասի ստեղծում	137,0
- ՊՔԿ կաուչուկի արտադրության առկա տեղամասի վերակառուցում	27,7
- ՆԳՏ ընդհանուր կոմունիկացիաներ	16,0
Արտագործարանային տնտեսության ծախսեր	51,8
ԸՆԴԱՄԵՆԸ ծախսեր.	316,5

Գ. Տարեկան 25 հազ.տ ՊՔԿ արտադրություն բութադիենային եղանակով

	մլն. ԱՄՆ դոլար
Ներգործարանային տնտեսության ծախսեր	125,6
- Քլորալկալիական նոր տեղամասի ստեղծում՝ տարեկան 25 հազ. տ ՊՔԿ-ի հաշվարկով	55,4
- Բութադիենից քլորոպրենի ստացման արտադրամասի վերականգնում՝ տարեկան 25 հազ. տ ՊՔԿ-ի հաշվարկով	41,8
- ՊՔԿ կաուչուկի արտադրության առկա տեղամասի վերակառուցում՝ տարեկան 25 հազ. տ ՊՔԿ-ի հաշվարկով	28,5
- ՆԳՏ ընդհանուր կոմունիկացիաներ	12,0
Արտագործարանային տնտեսության ծախսեր	110,6
ՆԳՏ+ԱԳՏ ծախսեր.	236,2

5. ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԲՈՒԹԱԴԻԵՆԻ ՇՈՒԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ


- Բուրադիենը լայնորեն շրջանառվում է միջազգային շուկաներում:
- «Նաիրիտ գործարան»-ին բուրադիենի մատակարարումը գործնականում իրագործելի է, եթե հնարավոր լինի տարանցումն իրականացնել Վրաստանի միջոցով (քաղաքական և կոմերցիոն ռիսկ):
- Հաշվի առնելով, որ Ռուսաստանից բուրադիենի մատակարարումը մատչելի չէ, «Նաիրիտ»-ի վերագործարկման դեպքում բուրադիենի աղբյուրն, ամենայն հավանականությամբ, կլինի Արևմտյան Եվրոպան (Գերմանիա, Նիդեռլանդներ կամ Ավստրիա):
- Հաշվի առնելով, որ ո՛չ Ռուսաստանի, ո՛չ էլ Թուրքիայի հետ առկա չէ երկաթուղային հաղորդակցություն, բուրադիենի փոխադրումն անհրաժեշտ կլինի իրականացնել վրացական նավահանգստով, որտեղից էլ այն կարող է երկաթուղով տեղափոխվել գործարան:
- Ներկա պահին վրացական նավահանգիստները չունեն լցանավերից բուրադիենը ստացումը սպասարկելու նավահանգստային տերմինալի հարմարություններ: Հետևաբար առկա է երկու տարբերակ.
 - *Ցածր կապիտալ ծախսերով, սակայն բարձր շահագործման ծախսեր տարբերակ.* բուրադիենի տեղափոխման համար կարելի է վազոններն ուղղակիորեն տեղափոխել լաստանավով կամ օգտագործել փոքր շարժական կոնտեյներիզացված ցիստեռններ:
 - *Բարձր կապիտալ ծախսերով, սակայն ցածր շահագործման ծախսերով տարբերակ.* վրացական նավահանգստում ընդունման տերմինալի կառուցում (հիմնական ներդրումը պահանջելու է բուրադիենի պահեստավորման նոր պարկ կառուցել՝ համապատասխան նավամատույցի մատչելիության դեպքում):

ԳՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


- Ընդհանուր առմամբ «Նաիրիտ»-ը բարձր ինքնարժեքով արտադրող է, ընդ որում թե՛ ԱՄՆ-ում և թե՛ Գերմանիայում գտնվող արտադրողներն ինքնարժեքով զգալի ավելի մրցունակ են՝ ըստ էության փակելով ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի շուկաները «Նաիրիտ»-ի առջև:
- Լոգիստիկ ավելի նպաստավոր ծախսերի, ինչպես նաև ընդհանուր առմամբ արտադրամքի և ապրանքների առաքման ավելի ցածր ինքնարժեքի շնորհիվ ճապոնական արտադրողներն ասիական, աֆրիկյան և լատինամերիկյան շուկաներում ավելի մրցունակ են, քան «Նաիրիտ»-ը:
- Երբ հաշվի է առնվում նաև կապիտալի ծախսը, «Նաիրիտ»-ը դառնում է միակ սահմանային արժեքով արտադրողը, որն ի վիճակի չէ մրցելու անգամ չինական գործարանների հետ: Չինական արտադրողները պատմականորեն օգտվել են չինական կառավարության հովանավորությունից, որով սահմանվել են ներմուծման բարձր մաքսատուրքեր:
- Ընդհանուր առմամբ «Նաիրիտ»-ում բուրժադիենի վրա հիմնված արտադրությունն ունի ցածր մրցունակություն, ինչը պահանջում է մի շարք նպաստավոր պայմաններ, ինչպիսիք են՝
 - Անմշակ նավթի ցածր գներ
 - Չինական շուկաներ մուտքի թույլատրում
 - Ներդրումներից ցածր շահութաբերության սպասումներ՝ կապիտալի ծախսի ազդեցությունը մեղմելու համար
 - Մրցակիցների ակտիվության նվազումը:
- Ացեսիլենային եղանակով արտադրության կենսունակ լինելու համար պահանջվում է բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագների զգալի նվազում:

ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Պատկեր 1. «Նաիրիտի» կանխատեսվող արտադրական ծախսերը բութադիենի և ագետիլենի վրա հիմնված գործընթացների դեպքում, 2020 թ.



Պատկեր 2. ՊՔԿ արտադրության ինքնարժեքի հաշվարկ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍՈՂԵԼԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ա. Տարեկան 12 հազ. տ ՊՔԿ արտադրությունն ացետիլենային եղանակով

Առկա մասնակի օքսիդացում POx

	Ծրագիր	Մեփ. Կապիտ.	ՇՆ % (20 տարի)	ԶԲԱ, մլն. դոլար		
	Կապիտ. ծախսեր մլն. դոլար	Կապիտ. ծախսեր մլն. դոլար		5%	10%	15%
Նախքան հարկումը	210	-	բացասական	-249	-207	-179
Հարկումից հետո	210	-	բացասական	-249	-207	-179
Ֆինանսավորումից հետո	210	210	բացասական	-249	-207	-179

Հատույցի մակարդակները գրավիչ չեն՝ պայմանավորված հետևյալ գործոններով.

- ՊՔԿ արտադրության մեկ տոննայի հաշվով պահանջվող մեծ կապիտալ ծախսեր,
- Քլորոպրենային մոնոմերի արտադրության համար անհրաժեշտ ացետիլենի ստացման համար օգտագործվող մասնակի օքսիդացման (POx) առկա գործընթացի ցածր արտադրողականությունը,
- Առկա քլոր-ալկալիական բլոկի գործընթացի ցածր արտադրողականությունը՝ պայմանավորված սարքավորումների տարիքով, որը հանգեցնում է քլորի և կաուստիկ սողայի արտադրության բարձր ինքնարժեքների:

ՇՆ = շահութաբերության նորմա

ԶԲԱ = զուտ բերված արժեք

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍՈՂԵԼԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բ. Տարեկան 24 հազ. տ ՊՔԿ արտադրություն ագետիլենային եղանակով

Առկա մասնակի օքսիդացում POx, առկա քլոր-ալկալիական բլոկ

	Ծրագիր	Սեփ. Կապիտ.	ՇՆ%	ԶԲԱ, մլն. դոլար		
	Կապիտ. ծախսեր մլն. դոլար	Կապիտ. ծախսեր մլն. դոլար	(20 տարի)	5%	10%	15%
Նախքան հարկումը	346	-	բացասական	-390	-328	-287
Հարկումից հետո	346	-	բացասական	-390	-328	-287
Ֆինանսավորումից հետո	346	346	բացասական	-390	-328	-287

Նոր BASF POx, առկա քլոր-ալկալիական բլոկ

	Ծրագիր	Սեփ. Կապիտ.	ՇՆ %	ԶԲԱ մլն. դոլար		
	Կապիտ. ծախսեր մլն. դոլար	Կապիտ. ծախսեր մլն. դոլար	(20 տարի)	5%	10%	15%
Նախքան հարկումը	346	-	բացասական	-275	-260	-244
Հարկումից հետո	346	-	բացասական	-275	-260	-244
Ֆինանսավորումից հետո	346	346	բացասական	-275	-260	-244

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍՈՂԵԼԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**Բ. Տարեկան 24 հազ. տ ՊՔԿ արտադրությունն ացետիլենային եղանակով
Նոր ISP պլազմայի աղեղ, առկա քլոր-ալկալիական բլոկ**

	Ծրագիր	Սեփ. Կապիտ.	ՇՆ %	ԶԲԱ, մլն.դոլար		
	Կապիտ. ծախսեր մլն. դոլար	Կապիտ. ծախսեր մլն. դոլար	(20 տարի)	5%	10%	15%
Նախքան հարկումը	346	-	բացասական	-206	-216	-214
Հարկումից հետո	346	-	բացասական	-206	-216	-214
Ֆինանսավորումից հետո	346	346	բացասական	-206	-216	-214

Հատույցի մակարդակները գրավիչ չեն՝ պայմանավորված հետևյալ գործոններով.

- ՊՔԿ արտադրության մեկ տոննայի հաշվով պահանջվող մեծ կապիտալ ծախսեր,
- Քլորոպրենային մոնոմերի արտադրության համար անհրաժեշտ ացետիլենի ստացման համար օգտագործվող մասնակի օքսիդացման (POx) առկա գործընթացի ցածր արտադրողականությունը,
- Առկա քլոր-ալկալիական բլոկի գործընթացի ցածր արտադրողականությունը՝ պայմանավորված սարքավորումների տարիքով, որը հանգեցնում է քլորի և կաուլստիկ սողայի արտադրության բարձր ինքնարժեքների:

ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ՍՈՂԵԼԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**Գ. Տարեկան 25 հազ.տ ՊՔԿ արտադրություն բութադիենային եղանակով
Քլոր-ալկալիական նոր բլոկ**

	Ծրագիր	Սեփ. Կապիտ.	ՇՆ %	ԶԲԱ, մլն. դոլար		
	Կապիտ. ծախսեր մլն. դոլար	Կապիտ. ծախսեր մլն. դոլար	(20 տարի)	5%	10%	15%
Նախքան հարկումը	264	-	բացասական	-193	-186	-178
Հարկումից հետո	264	-	բացասական	-193	-186	-178
Ֆինանսավորումից հետո	264	264	բացասական	-193	-186	-178

Հատույցի մակարդակները գրավիչ չեն՝ պայմանավորված հետևյալ գործոններով.

- ՊՔԿ արտադրության մեկ տոննայի հաշվով պահանջվող մեծ կապիտալ ծախսեր,
- Քլորոպրենային մոնոմերի արտադրության գործընթացի ցածր արտադրողականությունը:

6. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Տեխնիկական և ֆինանսական նկատառումներից ելնելով, մասնավոր հատվածի կողմից ձեռնարկությունը գործարկելու համար ներդրումների բացակայության դեպքում, հետագա կուտակվող վնասներից խուսափելու համար, պետք է դիտարկել գործարանի լուծարման ծրագրի մշակման և իրականացման խնդիրը:

Գործարանի լուծարման ծրագիրը պետք է ներառի հետևյալ հիմնական քայլերը.

- Իրականացնել գույքագրում և գնահատել ակտիվների շուկայական արժեքը.
- Կրեդիտորների հետ բանակցությունների ճանապարհով լուծել այն պարտքերի հարցերը, որոնք, ամենայն հավանականությամբ, հնարավոր չի լինի մարել ակտիվների վաճառքի միջոցով.
- Մշակել և իրականացնել սոցիալական ազդեցության մեղմման ծրագիր.
- Իրականացնել գործարանի մանրամասն բնապահպանական գնահատում.
- Իրականացնել լուծարման ծրագիր, ներառյալ՝ բնապահպանական մաքրում: